Հաստատված եմ
գնահատ՝ Հասարակ
29.08.2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզի Ակունքի միջն. դպրոցի

12-րդ դասարան

Դասղեկ՝ Մելքումյան Ա. Մ.

2022-2023 ուստարի

ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)*

Աշակերտների թիվը՝ 20 (10 տղա, 10 աղջիկ)

Կազմակերպված, համախմբված, ակտիվ դասարան է: Աշակերտների միջանձնային հարաբերությունները հիմնված են փոխադարձ սիրո, հարգանքի, վստահության, հանդուրժողականության վրա: Դասարանում տիրում է համագործակցության, փոխօգնության ջերմ մթնոլորտ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

- Սովորողների ընդհանուր զարգացմանը նպաստող միջոցառումների և նպատակային էքսկուրսիաների կազմակերպում
- Արդյունավետ համագործակցության և ազատ ու անկաշկանդ հաղորդակցման կարողությունների զարգացում
- Սովորողների մտավոր, իմացական կարողությունների, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը և մտահորիզոնի ընդլայնմանը միտված տարաբնույթ ինտելեկտուալ խաղերի (նաև առցանց) անցկացում, տեսանյութերի դիտում
- Հայրենիքի, պետության ու պետականության, ազգային արժեքների և ավանդույթների նկատմամբ հարգանք ու առանձնահատուկ վերաբերմունք սերմանելուն նպաստող զրույցների, քննարկումների և բանավեճերի անցկացում
- Մեդիագրագիտության մակարդակի բարձրացմանն ու ֆինանսական գրագիտության բարելավմանն ուղղված տեղեկատվական սեմինարների և դասախոսությունների կազմակերպում

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1. Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակությունը անհատի հոգեկերտվածքի ձևավորման ու զարգացման էական գործոններից է: Ուստի, շատ կարևոր է ամրապնդել սովորողների հարգանքը ազգային մշակույթի և հոևոր արժեքների նկատմամբ, նրանց հնարավորինս զերծ պահել աղանդների և այլ բացասական երևույթների ազդեցությունից:

3.2. Գեղագիտական դաստիարակություն

Սովորողների գեղագիտական ճաշակը, գեղեցիկը նկատելու, ընկալելու, գնահատելու և արժևորելու կարողությունները զարգացնելու նպատակով շարունակել նրանց ծանոթացնել ազգային և համաշխարհային մշակույթի գլուխգործոցներին:
Կազմակերպել այցելություններ թանգարաններ, արվեստի սրահներ, թատրոն և այլն:
Անցկացնել աստունքի ժամեր, ունկնդրումներ, կինոդիտում և այլն:

3.3. Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Կազմակերպել այնպիսի քննարկումներ, բանավեճեր, կլոր սեղաններ, որոնք կբարձրացնեն սովորողների քաղաքացիական գիտակցությունը, հայրենասիրական ոգին, կձևավորեն հարգալից և պատասխանատու վերաբերմունք պետության և Ազգային բանակի նկատմամբ: Այցելել մոտակա զորամաս, Եռաբլուր պանթեոն, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն

Խթանել դասարանի աշակերտների ներգրավվածությունը տարբեր մարզական խմբակներին և դպրոցում անցկացվող սպորտային միջոցառումներին: Հորդորել, որ նրանք վարեն առողջ ապրելակերպ, դրսևորեն ֆիզիկական ակտիվություն, կազմակերպել արշավներ: Անցկացնել ճանաչողական զրույցներ հայտնի մարզիկների, նրանց սպորտային նվաճումների մասին, հետևել մարզաշխարհի նորություններին:

3.5. Աշխատանքային դաստիարակություն

Ապահովել դասարանի մասնակցությունը ինչպես դպրոցում, այնպես էլ համայնքում կազմակերպվող շաբաթօրյակներին: Հետևել, որ յուրաքանչյուրը ներգրավվի իր հնարավորություններին և կարողություններին համապատասխան հանրօգուտ աշխատանքում:

3.6. Բնապահպանական դաստիարակություն

Կազմակերպել քննարկումներ արդի բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք կնպաստեն սովորողների իրազեկվածության բարձրացմանը, էկոլոգիական գիտակցության, մտածելակերպի և հայրենի բնության նկատմամբ պատասխանատու ու հոգատար վերաբերմունքի ձևավորմանը:

4. ԴՊՐՈՑ - ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Կազմակերպել խորհրդատվություններ և համագործակցել ծնողների հետ՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծելու նպատակով:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնա-կան շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատար-ման ժամկետը	Կատարողներ
1-ին շաբաթ	Զրույց «Իմ դպրոցական վերջին սեպտեմբերը» թեմայով	01.09.2022	Դասղեկ, աշակերտներ
2-րդ շաբաթ	Քննարկում «Մարդիկ, ում վստահում եմ անվերապահորեն» թեմայով	08.09.2022	Դասղեկ, աշակերտներ
3-րդ շաբաթ	Զրույց «Առանց անկախության ոչ ոք իրականում անուն չունի» թեմայով՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 30 ամյակին	16.09.2022	Աշակերտներ
4-րդ շաբաթ	Զրույց «Կյանքդ՝ կյանքիս համար, կյանքս՝ կյանքիդ գնով…» թեմայով	22.09.2022	Աշակերտներ
5-րդ շաբաթ	Կլոր սեղան «Ինչպես զերծ մնալ խարդախու-թյուններից և զեղծարարություններից» խորագրով	29.09.2022	Դասղեկ, աշակերտներ
6-րդ շաբաթ	Բանավեճ «Ուսուցիչ լինելը կոչու՞մ է, թե՞ մասնագիտություն» թեմայով	06.10.2022	Դասղեկ, աշակերտներ
7-րդ շաբաթ	«Հայկական ճարտարապետության գլուխգործոցները» թեմայով ցուցադրումներ. ներկայացնում են աշակերտները	1310.2022	Աշակերտներ
8-րդ շաբաթ	«Արվեստի հետքերով. Միեր Մկրտչյան». տեսանյութի դիտում՝ https://www.youtube.com/watch?v=iTLJfRYn3-A	20.10.2022	Դասղեկ, աշակերտներ
9-րդ շաբաթ	«Ալեքսանդր Սպենդիարյանի կյանքն ու ստեղծագործությունը», դաս՝ նվիրված կոմպոզիտորի 150-ամյա հոբելյանին /1871 թ., նոյեմբերի 1/	03.11.2022	Դասղեկ
10-րդ շաբաթ	Կլոր սեղան-քննարկում «Մասնակցայնություն և առաջնորդություն» թեմայով	10.11.2022	Դասղեկ, աշակերտներ
11-րդ շաբաթ	Դաստիարակչական զրույց-քննարկում «Խոչընդոտների հաղթահարման իմ բանաձևը»	17.11.2022	Դասղեկ, աշակերտներ
12-րդ շաբաթ	«Գրիգոր Խանջյան», դաս՝ նվիրված նկարչի 95 ամյակին /1925, նոյեմբերի 29/	24.11.2022	Դասղեկ, աշակերտներ
13-րդ շաբաթ	Դասախոսություն «Բնական աղետներ. իմ գործողությունները» թեմայով՝ ՆԶՊ-ի ուսուցչի մասնակցությամբ	01.12.2022	Դասղեկ, ՆԶՊ ուսուցիչ աշակերտներ
14-րդ շաբաթ	Տեղեկատվական զրույց «Ֆեմինիզմի երեք ալիքները» թեմայով	08.12.2022	Դասղեկ
15-րդ շաբաթ	Բանավեճ «Եթե ես բարձրաձայնեի…» թեմայով	15.12.2022	Աշակերտներ

16-րդ շաբաթ	«Անդրադարձ անցնող կիսամյակին»՝ վերլուծական զրույց ձեռքբերումների և թերացումների մասին	22.12.2022	Դասղեկ, աշակերտներ
17-րդ շաբաթ	Մտքերի փոխանակում «Մեկնարկեց երկրորդ կիսամյակը» թեմայով: Հետագա անելիքների հստակեցում		Դասղեկ, աշակերտներ
18-րդ շաբաթ	Քննարկում «Փոխադարձ գնահատում և ինքնագնահատում» թեմայով		Դասղեկ, աշակերտներ
19-րդ շաբաթ	«Երբ ազգը դառնում է բանակ» խորագրով բանավեճ		Դասղեկ, աշակերտներ
20-րդ շաբաթ	«Ռուբեն Մամուլյան. կյանքն ու ստեղծագործությունը», ցուցադրման ներկայացում		Դասղեկ, աշակերտներ
21-րդ շաբաթ	Քննարկում «Քայլել և գործել ժամանակի մարտահրավերներին համընթաց» թեմայով		Դասղեկ, աշակերտներ
22-րդ շաբաթ	«Ամենայն հայոց բանաստեղծը». ասմունքի ժամ՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան տարեդարձին		Աշակերտներ
23-րդ շաբաթ	Դասղեկի թեմատիկ ժամ՝ «Արթուր Թարխանյան»՝ նվիրված ճարտարապետի 90-ամյա հոբելյանին /1932, փետրվարի 23/		Դասղեկ, աշակերտներ
24-րդ շաբաթ	«Մի ֆիլմի պատմություն - Աշնան արև». տեսանյութի դիտում https://www.youtube.com/watch?v=BnRC4kIFN7s		Դասղեկ, աշակերտներ
25-րդ շաբաթ	«Ե՛ս եմ հիմա մի պոետ, և իմ անունը՝ Չարենց», Չարենցի մասին տեսանյութերի դիտում		Դասղեկ, աշակերտներ
26-րդ շաբաթ	Հայոց եկեղեցու տաղավար տոները: Հարության տոն կամ Սուրբ Զատիկ		Դասղեկ, աշակերտներ
27-րդ շաբաթ	«Հայաստանի պետական ջազ նվագախումբ՝ հիմնադիր Արտեմի Այվազյան», դաս՝ նվիրված երաժշտի 120 ամյակին /1902, հունիսի 26/		Դասղեկ
28-րդ շաբաթ	Քննարկում «Ես ուժեղ եմ, որովհետև…» թեմայով		Աշակերտներ
29-րդ շաբաթ	«Ալեքսանդր Մանթաշյանց. նշանավոր գործարարն ու բարեգործը», դաս՝ նվիրված գործարարի 180 ամյակին /1842, ապրիլի 19/		Դասղեկ, աշակերտներ
30-րդ շաբաթ	«Եղեռնը մամիկիս աչքերով»՝ եղեռնից մազապուրծ եղած մի տոհմի պատմություն		Դասղեկ
31-րդ շաբաթ	Զրույց «Հաջողելու եմ, որովհետև…» թեմայով		Դասղեկ, աշակերտներ
32-րդ շաբաթ	«Լեոնիդ Ազգալդյան». Արցախի հերոսի մասին ֆիլմի դիտում https://www.youtube.com/watch?v=-Wd1YqMxmLk		Դասղեկ, աշակերտներ

33-րդ շաբաթ	Քննարկում-վերլուծություն «Ավարտում ենք դպրոցը. ո՞րն է իմ գլխավոր ձեռքբերումը» թեմայով		Դասղեկ, աշակերտներ
34-րդ շաբաթ	Վերջին դասի կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում, անելիքների հստակեցում		Դասղեկ, աշակերտներ, ծնողական խորհուրդ
35-րդ շաբաթ	Վերջին դասի կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում, անելիքների հստակեցում		Դասղեկ, աշակերտներ, ծնողական խորհուրդ

2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Խթանել և ապահովել դասարանի աշակերտների մասնակցությունը.

- նախասիրական, գեղարվեստական, երաժշտական, սպորտային և այլ խմբակներին
- առարկայական օլիմպիադաներին
- համադպրոցական, տարածքային և մարզային միջոցառումներին

Դասարանի ղեկավարի աշխատանքներ.

- աշխատանքներ դժվար դաստիարակվող, սոցիալապես անբարենպաստ վիճակում գտնվող, ծնողազուրկ աշակերտների հետ
- դասղեկի դասալսումներ
- դասարանական ծնողական ժողովներ
- անհատական աշխատանքներ ծնողների հետ
- աշխատանքներ ծնողական խորհրդի հետ